

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը	Տարրական դասարանի ուսուցիչ (դասվար)
Դերը	<ul style="list-style-type: none"> • Աշակերտների ուսուցման և դաստիարակության կազմակերպումն է դասավանդող առարկայի առանձնահատկությունների հաշվառմամբ; • Աշակերտների սոցիալականացման իրականացումը, նրա անձի ընդհանուր կուլտուրայի ձևավորումը; • Կիրառելի ուսուցման զանազան մեթոդներ, տեխնոլոգիաներ, միջոցներ և հնարներ; • Ապահովել աշակերտների կրթության պատշաճ մակարդակը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան; • Պահպանել աշակերտների իրավունքներն ու ազատությունը՝ ՀՀ “Կրթության օրենքին” համապատասխան; • Անընդհատ կատարելագործել մասնագիտական գիտելիքները, մասնակցել մեթոդիավորումների աշխատանքներին; • Իրականացնել աշակերտների ծնողների հետ կապեր՝ նրանց դաստիարակության, ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով; • Կրթական գործընթացում ապահովել երեխայի կյանքն ու առողջությունը:
Խնդիրների բնագավառ 1.	Ուսումնադաստիարակչական գործունեության բնագավառ
Աշխատանքային գործընթացը	Ուսումնադաստիարակչական գործունեության կազմակերպում:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Իրականացնում է առարկաների ուսուցման գործընթացը կրթական ծրագրերին համապատասխան; • Պլանավորում և անցկացնում է ուսումնական պարապմունքները՝ թեմաների, ծրագրի բաժինների և ուսումնական պլանների համապատասխան; • Կիրառում է գիտականորեն հիմնավորված ժամանակակից ուսուցման մեթոդները, հնարները և միջոցները, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաները; • Կիրառում է ուսուցման արդյունքների գնահատման ժամանակակից միջոցները և ձևերը; • Աշակերտների դաստիարակությունը՝ հոգևոր, բարոյական արժեքների և քաղաքացիական համոզմունքների տեսանկյունից; • Աշակերտների կրթության և զարգացման իրականացումը անձնային-կողմորոշման մոտեցմամբ՝ ուսման նկատմամբ դրդապատճների ստեղծման նպատակով; • Ուսուցման և զարգացման աշխատանքների կազմակերպումը՝ շեղումների շտկման հաշվառմամբ:
Խնդիրների բնագավառ 2.	Սոցիալ-մանկավարժական գործունեության բնագավառ
Աշխատանքային գործընթացը	Ծնողների և աշակերտների հետ կատարվող աշխատանքներ:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Աշակերտներին սոցիալականաց ընթացքում օգնության դրսևորում; • Աշակերտների ծնողների հետ կապերի հաստատում, ընտանեկան դաստիարակության ընթացքում օգնության դրսևորում, ծնողների մանկավարժական

	<ul style="list-style-type: none"> իրագեցում; Աշակերտների ինքնուրույն աշխատանքի և արտադասարանական գործունեության կազմակերպում;
Խնդիրների բնագավառ 3.	Գեղագիտական և էկոլոգիական դաստիարակություն
Աշխատանքային գործընթացը	Աշակերտների ընդհանուր կուլտուրայի ձևավորում:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> Ուսումնական ճամփորդության կազմակերպում; Ցուցահանդեսների կազմակերպում; Միջոցառումների կազմակերպում; Ծառատունկի և կենդանիների խնամքի կազմակերպում;
Խնդիրների բնագավառ 4.	Գիտամեթոդական գործունեության բնագավառ
Աշխատանքային գործընթացը	Հետազոտական աշխատանքի կազմակերպում
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> Գիտամեթոդական աշխատանքի իրականացում, մասնակցություն գիտամեթոդական միավորումների աշխատանքներին; Ինքնագնահատում և ինքնավերլուծություն՝ մանկավարժական որակավորումը բարձրացնելու նպատակով: Մանկավարժական ծրագրերի մշակում Ուսուցման և դաստիարակության արդյունքների վերահսկողության կազմակերպում;
Խնդիրների բնագավառ 5.	Կազմակերպչական-կառավարող գործունեության բնագավառ
Աշխատանքային գործընթացը	Մասնակցություն դպրոցի կառավարմանը
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> Դպրոցական և դասարանական փաստաթղթերի վարում; դասվարի ֆունկցիաների կատարում; Մասնակցություն դպրոցական կոլեկտիվի ինքկառավարման և կառավարման գործընթացներին:
Պատասխանատվությունը	Կրտսեր դպրոցի ուսուցիչը պատասխանատու է երեխայի առողջության և կյանքի ապահովման, գիտելիքների յուրացման մակարդակի, կարողությունների և հմտությունների ձևավորման, երեխայի սոցիալականավցման մակարդակի, կրթության շարունակականության ապահովման համար:
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք	
Լեզուներ	<ul style="list-style-type: none"> Պետական լեզուն՝ հայերենը- տիրապետի լիարժեք, բարձր մակարդակի վրա, Ռուսերեն և անգլերեն լեզուները՝ տիրապետի բավարար մակարդակով՝ մասնագիտական գրականությունից և այլ տեղեկատվական միջոցներից օգտվելու նպատակով:
Համակարգիչ	MS Word - գերազանց Internet Explorer՝ գերազանց Power Point - գերազանց Excel-բավարար
Գիտելիքները	<p>Իմանա.</p> <ul style="list-style-type: none"> Ընդհանուր և հատուկ տեսական դասընթացների բովանդակությունը, որը անհրաժեշտ է մասնագիտական գործունեության տիպային խնդիրները լուծելու համար; Մանկավարժական գիտության և կրթության զարգացման հիմնական ուղղությունները և հեռանկարները; Ուսուցման միջոցներն ու դրանց դիդակտիական հնարավորությունները; Դպրոցական ուսումնական ծրագրերն ու դասագրքերը;

<p>Կարողությունները և հմտություններ</p>	<p>Կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • պլանավորել առարկայական ուսումնական նյութը, ապահովելով ուսումնական ծրագրի պահանջները; • Կարողանա մասնակցել մեթոդական աշխատանքներին; • Կիրառել առավել արդյունավետ ուցուցման և դաստիարակության ձևերը, մեթոդները, ձևերը; • Վերլուծել աշակերտների առաջադիմությունը; • Ապահովել ուսումնական կարգապահությունը; • Խթանել իմացական գործունեությունը և ուսման դրդապատճառները; • Հասնել աշակերտների կողմից խորը և ամուր գիտելիքների յուրացմանը, կիրառմանը պրակտիկ գործունեության ընթացքում; • Անցկացնել լրացուցիչ նախասիրական պարապմունքներ; • Ղեկավարել առարկայական խմբակները; • Ուսումնասիրել և հաշվի առնել աշակերտների անհատական առանձնահատկությունները; • Կազմակերպել աշակերտների ծնողների հետ աշխատանքներ, լուսավորել նրանց՝ միասնական ուժերով երեխայի ուսուցումը, դաստիարակությունը և զարգացումը իրականացնելու նպատակով:
<p>Վերաբերմունքը</p>	<p>Դասավանդողի հոգածության կենտրոնում երեխայի անձն է /անձնակողմնորոշիչ ուսուցում և դաստիարակություն/: Ուսուցիչը պարտավոր է հասկանալ, հաշվի նստել /հարգել/ և ընդունել երեխային այնպիսին, ինչպիսին որ նա կա՝ հումանիստական մանկավարժության պահանջներին համապատասխան:</p>